ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԽՈՐԱՀԱՐԳ ՍԱՀԱԿ ԿԱՐՊՈՎԻՉ,

Այսօր, Սովետական Հայաստանի 30-ամյա հոբելյանի կապակցությամբ, Սովետական երկրներում և արտասահմանում, ամենուրեք ուր հայ կա և հայ Էկեղեցի, մատուցվում է հանդիսավոր պատարագ և քարոզվում Հայաստանի աննախընթաց վերելքը՝ գիտության, գեղարվեստի ու տնտեսական մարզերում, ինչպես և կատարվում է մաղթանք՝ աշխարհի խաղաղության և Հայրենի երկրի է՛լ ավելի զարգացման ու բարգավաճման համար:

Այսօր, հայ ժողովուրդն երախտագիտությամբ լցված և հպարտությամբ պանծացած, ցնծությամբ է տոնում իր երկրում Սովետական կարգերի հաստատման 30-ամյակը — իր ազատագրման և վերածննդյան տոնը:

Հայ ժողովուրդն այժմ անսահմանորեն ուրախ է, որովհետև տեսնում է իր 600-ամյա երազ-հույսերի իրականացումը — ազատագրված և անկախ Հայրենի Պետություն:

Նա հոգու և սրտի բերկրության հուզումնալից մոմենտներ է ապրում, որովհետև տեսնում է հայ ժողովրդի պատմական հայրենախույս հոսանքի փոխարեն հայրենադարձ նոր հոսանք. նա տեսնում է իր Հայրենի երկրում վտարանդի իր հարազատներին, որոնք օտարության մեջ գլխիկոր և պատվազուրկ էին, իսկ այսօր իրենց Հայրենի Հողի վրա, հարազատ Պետության ծոցում՝ հոգով հպարտ են և գլխով վերամբարձ՝ ազատագրված օտարի սարկական լծից, ազատված ձուլման ու անէացման վտանգից:

Հայ ժողովուրդն ուրախ է, որովհետև տեսնում է իր Հայրենի երկիրը կերպարանափոխված. նա վերածնվել է, և կուլտուրայի, գիտության, գեղար-

վեստի, արդյունաբերության և գյուղատնտեսության մարզերում առաջավոր երկրների վերելքին հասել:

Սովետական Հայաստանը աճել, զարգացել և դարձել է Սովետական Միության առաջավոր հանրապետություններից մեկը:

Հայ ժողովուրդն իր այս աննախընթաց վերելքը պարտական է իր շինարար, ստեղծագործող, հերոսական ջանքերին, իր հաստատակամության և անսպառ եռանդին:

Նա իր այս աննախընթաց վերելքը պարտական է իր Հայրենի Պետության 30-ամյա տաղանդավոր ղեկավարությանը և նվիրված գործիչներին:

Եվ, վերջապես, նա իր այս աննախընթաց վերելքը պարտական է նաև ռուս մեծ և տաղանդավոր ժողովրդին ու Սովետական Միության մյուս ժողովուրդներին՝ նոցա ցույց տված բարյացակամ և գործուն աջակցության համար:

Հայ ժողովրդի 30-ամյա պանծալի տոնին ուրախակից է նաև Հայ եկեղեցին և հոգևորականությունը, որն անշեղ ընթացել և այժմ ընթանում է հայ ժողովրդի ուրախության՝ խնդակից և վշտերին՝ վշտակից, իր նախնյաց արքաքան ավանդներով. նա իր ժողովրդի և Հայրենիքի հետ է եղել միշտ և այսուհետև էլ նոցա հետ կլինի:

Շնորհավորելով Սովետական Հայաստանի նշելի ու պանծալի տոնը՝ մաղթում ենք Բարձրյալին պարգևել Հայրենի Պետության ներկա ղեկավարներին ու նոցա աջակիցներին կար և ուժ՝ նույն եռանդով ու նպատակասլացմամբ ղեկավարելու հայ ժողովրդին: Մաղթում ենք Տիրոջը, որ Հայրենի երկիրը՝ Սովետական Հայաստանը է՛լ ավելի աճի, զորանա և բարգավաճի, ի միխթարություն անցյալում տառապալից հայ ժողովրդի:

ԳԵՈՐԳ Զ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 նոյեմբերի 1950 թ.
Ս. Էջմիածին